Ուսուցիչների պարտադիր

վերապատրաստման դասընթաց

աշխարհագրությունից

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սերվիսային գործունեության

զարգացման հնարավորությունները

Բյուրականում

Կատարող՝ Հասմիկ Թորոսյան

Ղեկավար՝ Ա.Խաչատրյան

Աշտարակի N 5 ավագ դպրոց

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ՍԵՐՎԻՍԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՅՈՒՐԱԿԱՆՈՒՄ

ВОЗМОЖНОСТИ РАЗВИТИЯ СЕРВИСНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ В БЮРАКАНЕ

OPPORTUNITIES OF SERVICE DEVELOPMENT IN BYURAKAN

Աշխատանքի նպատակը՝

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և բացահայտել Բյուրական գյուղում սերվիսային գործունեության զարգացման հնարավորությունները, սերվիսային գործունեության կազմակերպման տարածքային առանձնահատկությունները, զարգացման անհրաժեշտ պայմաններն ու կատարվող միջոցառումները:

Հետազոտության արդյունքում ստացված արդյունքները՝

Ուսումնասիրելով Բյուրականում սերվիսային ներուժը և այնտեղ սերվիսային գործունեության իրականացման և զարգացման հնարավորությունները պարզ դարձավ, որ Բյուրական գյուղում սերվիսի և նրա ճյուղերի զարգացումը մեծապես կնպաստի գյուղի սոցիալ-տնտեսական զարգացմանն ու առաջընթացին: Ուսումնասիրելով գյուղի բնական, տնտեսաաշխարհագրական, բնակլիմայական անհրաժեշտ պայմաններն ու հնարավորությունները, հաշվի առնելով գյուղում տնտեսության ճյուղերի զարգացվածության մակարդակը, կարող ենք փաստել, որ Բյուրականում սերվիսի զարգացման մեծ հնարավորություններ կան և այդ հնարավորությունները վերաբերում են ինչպես ներկա, այնպես էլ հետագա զարգացմանը: Հատկապես ակնհայտ է զբոսաշրջության զարգացման անհրաժեշտությունը, որը կարող է նաև լրացուցիչ հիմք հանդիսանալ սերվիսային ձեռնարկությունների ակտիվացման համար: Հասարակական զարգացման համար կարևոր ցուցանիշ է պահանջմունքների բավարարման տարբեր ծառայություններից օգտվելու հնարավորությունը: Այդպիսի հնարավորությունների պրակտիկ ապահովումը կազմում է սպասարկման ոլորտի նպատակն ու բովանդակությունը: Ծառայություններ մատուցելիս սերվիսը ներառում է սերվիսային գործունեության տարբեր տեսակներ, որոնք ներառում են մարդկային կենսագործունեության կարևորագույն կողմերը: Ուսումնասիրելով Բյուրական գյուղի սերվիսային գործունեության ոլորտը, եկանք այն եզրակացության որ գյուղն ունի անհրաժեշտ պայմանները՝ սերվիսի կազմակերպման համար, սակայն դրանք կյանքի կկոչվեն համապատասխան միջոցառումների իրականացման դեպքում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……8

ԳԼՈՒԽ 1. ՍԵՐՎԻՍԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Սերվիսային գործունեության դերն ու նշանակությունը……11

1.2 Սերվիսային գործունեության հիմնական տեսակները գյուղական բնակավայրերում ……17

1.3 Սերվիսային գործունեության կազմակերպման տարածքային առանձնահատկությունները……19

ԳԼՈՒԽ 2. ԲՅՈՒՐԱԿԱՆ ԳՅՈՒՂԸ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ԱՌԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Բյուրականի ՏԱԴ-ը որպես սերվիսի զարգացման նախադրյալ ……24

2.2 Բյուրական գյուղի բնութագիրը ……27

2.3 Բյուրականի խոշոր սերվիսային ձեռնարկությունների նկարագիրը……..33

ԳԼՈՒԽ 3. ՍԵՐՎԻՍԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՅՈՒՐԱԿԱՆՈՒՄ

3.1 Բյուրականում սերվիսային գործունեության զարգացման անհրաժեշտ պայմանները ……..40

3.2 Բյուրականում սերվիսի զարգացմանն ուղղված միջոցառումները ……43

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՁԱՐԿՈՒԹՅՈՒՆ……..……...……46

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..49

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի արդիականությունը: Ամբողջ աշխարհում գնալով ավելի ու ավելի է մեծանում սերվիսի կամ ծառայությունների ոլորտի դերը՝ դառնալով շատ երկրների տնտեսությունների առաջատար ճյուղերից մեկը: Սերվիսի կարևորությունը մեծանում է ոչ միայն տնտեսության բնագավառում, այլ նաև մարդկային հարաբերություններում: Սերվիսը քայլ առ քայլ դառնում է մարդկության կյանքի որակը բնութագրող ցուցանիշ: Ինչպես ամբողջ աշխարհում այնպես էլ Հայաստանում սերվիսի ոլորտը մեծ կարևորություն ունի: Հասարակական կյանքի զարգացման հետ մեկտեղ գնալով բարդ ու բազմազան են դառնում մարդկային պահանջմունքները: Այդ պահանջմունքների բավարարելուն են ուղղված սերվիսի ոլորտը և սերվիսային գործունեությունը: Հայաստանը ևս այդ ամենի մի մասնիկն է, և սերվիսի զարգացումն ու առաջընթացը կարևոր են ոչ միայն մայրաքաղաք Երևանի, այլ նաև ՀՀ ամբողջ տարածքի, մարզերի և գյուղական բնակավայրերի համար: Վերջինս փորձում ենք իրականացնել Բյուրական գյուղի օրինակով՝ հաշվի առնելով աշխարհագրական դիրքի առանձնահատկությունները, բնական նախադրյալները, տնտեսաաշխարհագրական դիրքի յուրահատկությունները, տեղական սոցիալ-մշակութային պայմանների առանձնահատկությունները: Կարող ենք նշել, որ Բյուրականում սերվիսի ոլորտը կապահովի բնակչության զբաղվածության շուրջ 50%-ը: Այսինքն՝ սերվիսը Բյուրականում կդառնա տնտեսության զարգացման հիմնական գործոն, հետևաբար զարգացած տնտեսություն ունենալու նախադրյալ: Ավարտական աշխատանքում ներկայացված ինֆորմացիան ոչ միայն տեղեկացնող է այլ նաև առաջարկի տարբերակներ է ներկայացնում Հայաստանում սերվիսի՝ կարևոր և գերակա ճյուղի զարգացման համար, որը ցույց է տալիս աշխատանքի արդիականությունը:

Աշխատանքի հետազոտական հարցը (վարկածը): Աշխատանքի հետազոտական հարցը հետևյալն է. Արդյոք Բյուրականում սերվիսային գործունեության առկա պայմանները կնպաստեն սերվիսի՝ գյուղի տնտեսության առաջատար ճյուղ դառնալուն:

Աշխատանքի օբյեկտը և առարկան: Թեմայի համար ուսումնասիրության օբյեկտ է սերվիսային գործունեության առանձնահատկությունները, իսկ առարկան՝ սերվիսային գործունեության զարգացման հնարավորությունները Բյուրականում:

Աշխատանքի նպատակը: զարգացման Ուսումնասիրել և բացահայտել Բյուրական գյուղում սերվիսային գործունեության զարգացման հնարավորությունները, սերվիսային գործունեության կազմակերպման տարածքային առանձնահատկությունները, անհրաժեշտ պայմաններն ու կատարվող միջոցառումները:

Աշխատանքի խնդիրները: Նպատակին հասնելու համար դրվել և լուծվել են

հետևյալ խնդիրները՝

1.Ներկայացվել է սերվիսային գործունեության դերն ու նշանակությունը

2. Նկարագրվել է սերվիսային գործունեության հիմնական տեսակները գյուղական բնակավայրերում

3. Ներկայացվել է սերվիսային գործունեության կազմակերպման տարածքային առանձնահատկությունները

4. Ներկայացվել և քննարկվել է ՏԱԴ-ը որպես Բյուրականի սերվիսի զարգացման նախադրյալ

5. Ներկայացվել և ուսումնասիրվել են Բյուրականի խոշոր սերվիսային ձեռնարկությունների նկարագիրը և դրանց տնտեսական նշանակությունը:

6. Վեր են հանվել Բյուրականում սերվիսային գործունեության զարգացման անհրաժեշտ պայմանները

7. Ներկայացվել և ուսումնասիրվել են Բյուրականում սերվիսի ոլորտի զարգացմանն ուղղված բոլոր միջոցառումները:

Աշխատանքում օգտագործված մեթոդները: Կիրառվել են ուսումնասիրության հետևյալ մեթոդները՝ նկարագրության, հարցումների, պատմական, համեմատման, դասակարգման, գնահատման, վերլուծության, համադրության:

Աշխատանքի կիրառական նշանակությունը: Աշխատանքում շարադրված նյութը, նրա վերլուծությունը և գնահատականը, դասակարգումը և մեկնաբանությունները հնարավորություն են տալիս աշխատանքն օգտագործել Բյուրականում սերվիսի զարգացմամբ զբաղվով կազմակերպություններին, ընկերություններին, անհատ անձանց՝ այս ոլորտում աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելու և հեռանկարային ծրագրեր իրականացնելու համար:

ԳԼՈՒԽ1. ՍԵՐՎԻՍԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Սերվիսային գործունեության դերն ու նշանակությունը

Ժամանակակից մարդու կենսագործունեությունը հիմնված է ապրանքների և ծառայությունների սպառման վրա: Դրանց ստեղծումը, արտադրությունը և բաշխումն ապահովում են մարդկանց կարիքների բավարարումը և ազգային տնտեսության դինամիկ զարգացումը: Սերվիսային գործունեության ոլորտն իր մեջ ներառում է տարատեսակ գործունեություններ, որոնք ընդհանուր առմամբ որոշում են հասարակության կյանքի որակը և հոգևոր արժեքների մակարդակը:

Սերվիսը մարդկային գործունեության հատուկ տեսակ է որն ուղղված է ծառայությունների մատուցման միջոցով հաճախորդների պահանջմունքների բավարարմանը[1]: Սա սերվիս հասկացության ընդհանուր սահմանումն էր, սակայն նրա ամբողջ էությունը բացահայտելու համար պետք է բացահայտել հետևյալ հասկացությունները. սերվիսային գործունեություն, պահանջմունք, ծառայություն, ծառայության տրամադրում և սպասարկում:

- Սերվիսային գործունեությունը սպասարկողների (անհատներ, կազմակերպություններ ևն) նպատակաուղղված աշխատանքային գործունեությունն է, որի վերջնական նպատակն է ծառայությունների մատուցման միջոցով բնակչության պահանջմունքների բավարարումը: Այն ներառում է ծառայությունների մատուցման տեխնիկական բոլոր հնարները, եղանակները և միջոցները (ինչպես սպասարկել):

Սերվիսի և սերվիսային գործունեության մասին առկա են բազմաթիվ, հաճախ էլ միմյանց կրկնող կամ հակասող մոտեցումներ, մշակված տարբեր հետազոտողների կողմից:

Այնուհանդերձ դրանք բոլորն էլ միավորվում են այն հիմնարար գաղափարի շուրջ, որ սերվիսային գործունեության հիմքում որպես ելակետային գործոն ընկած են մարդկային պահանջմունքները:

Արդի աշխարհում պահանջմունքների առկայությամբ և դրանց բավարարման անհրաժեշտությամբ են պայմանավորված.

- սերվիսային գործունեության բուռն զարգացումը՝ տնտեսության մեջ և

[1] Лебедева А.Э. Сервисная деятельность: Учебное пособие, Томск, 2012г. стр. 11-15.

հասարակական կյանքում, դրա դերի և նշանակության աննախադեպ բարձրացում

- սերվիսագիտական համալիր ուսումնասիրությունների կայացումը և հետագա զարգացումը:

Պահանջմունքը մարդու համար էական, կարևոր ինչ-որ բանի անհրաժեշտության, պակասի, չլինելու հոգեբանական զգացումն է, որը ստանում է որոշակի յուրահատուկ ձև ու բովանդակություն՝ ելնելով յուրաքանչյուր անհատի ճաշակից ու նախասիրություններից, կուլտուրայի, կրթվածության մակարդակներից, նյութական հնարավորություններից, հոգևոր-մշակութային և բարոյական արժեհամակարգերի առանձնահատկություններից, կրոնական ու ազգային գործոններից և այլն: Պահանջմունքներն ընկած են մարդու գործունեության, վարքագծի ձևավորման հիմքում՝ որպես դրդապատճառներ, որոնք մղում են ակտիվության: Պահանջմունքները կարելի է բնորոշել նաև որպես անհատականացված կարիք[2]:

- Ծառայությունը նպատակաուղղված աշխատանքային գործունեություն է, որի արդյունքում ոչ թե նյութական բարիքներ են ստեղծվում, այլ բավարարվում են մարդկային պահանջմունքները: Ըստ մարքեթինգի տեսության հիմնադիր Ֆիլիպ Կոտլերի սահմանման, ծառայությունը ցանկացած տեսակի աշխատանք է, գործունեություն կամ բարիք, որը կողմերից մեկը կարող է առաջարկել մյուսին:[3]

- Ծառայությունների տրամադրումը շատ լայն և բարդ հասկացություն է: Այն ներառում է ծառայությունը արտադրողից սպառողին հասցնելու ողջ գործընթացը:

- Սպասարկումը ծառայությունների տրամադրման օղակներից մեկն է միայն և իրենից ներկայացնում է անմիջական և կենդանի շփման պայմաններում հաճախորդների պահանջմունքների բավարարումը:

Սերվիսի հիմնական հասկացությունները մեծ ազդեցություն ունեն սերվիսի վրա, քանի որ դրանք համարվում են սերվիսային գործունեության կազմակերպման հիմնական բաղադրատարերը: Դրանց կարևորությունը աննկարագրելի է, քանի որ ինչքան մեծանում են մարդկանց պահանջմունքները, այնքան ավելի բազմազան են դառնում ծառայությունները:

---

[2] Սարգսյան Տ., Սահակյան Իր., Ծառայությունների ոլորտի համառոտ բառարան, Երևան, 2016թ., էջ 111

[3] Леготина И.М., Сервисная деятельность, Шадринск, 2010г, стр 9-15.

Սերվիսային գործունեության համակարգը իր մեջ ներառում է բազմաթիվ նյութական ռեսուրսներ: Սերվիսային գործունեության էությունը օգտակար արդյունավետության ստեղծումն է: Ամբողջ սերվիսային գործունեությունը կարելի է ներկայացնել իրական և իդեալական մատուցմամբ: Սերվիսային գործունեության կամ ծառայությունների ոլորտին ընդունված է հարաբերել տնտեսության մի շարք ճյուղեր՝ առևտուր, ֆինանսներ, տրանսպորտ, առողջապահություն, սպորտի և զվարճանքների ինդուստրիան, ինչպես նաև գիտության ոլորտ, կրթություն և կառավարում(թեև գիտական, կրթական և կառավարչական գործունեությունը սահմանափակվում է միայն ծառայությունների մատուցմամբ):[4]

Տեսակները դասակարգվում են ըստ սպասարկման ոլորտների իրականացման, ավելի մանրամասն, սերվիային գործունեությունը իր մեջ ներառում է կենցաղային ծառայություններ՝ բեռնատար և ուղևորատար տրանսպորտի ծառայություններ, կապ, բնակարանային-կոմունալ ծառայություններ, կրթության համակարգի ծառայություններ, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ծառայություններ, իրավական, բժշկական, առողջարանային – առողջարարական ծառայություններ և այլն:

Սերվիսային գործունեության ամենատարածված դասակարգմամբ այն ընդունված է բաժանել մարդկային գործունեության 4 հիմնական ձևերի ՝

1.Նյութական - արտադրողական

2.Ճանաչողական

3.Արժեքային ուղղվածություն

4.Կոմունիկացիոն

Նյութական - արտադրողական գործունեություն: Սա մարդու կողմից բնության տարրերի փոփոխման, մեզ շրջապատող առարկաների ստեղծման, ինչպես նաև մարդկային օրգանիզմի և հասարակության ստեղծման գործընթացն է:

Սերվիսը այս բնագավառում ներառում է բազմաբնույթ ծառայություններ, այդ թվում անհատական՝ կախված մարդկանց նյութական պահանջմունքների բավարարումից: Օրինակ՝ տեխնիկական սպասարկում, բնակարանների վերանորոգում, մթերքների, սննդի արտադրություն և այլն:[5] Բացի դրանից

[4] Խաչատրյան Ն., Գասպարյան Կ., Ծառայությունների էկոնոմիկա: Ուսումնական ձեռնարկ, Եր.,Եղիթ Պրինտ, 2013, էջ 30-34

[5] Карнаухова В.К., Краковская Т. А., Сервисная деятельность, Ростов-на-Дону,2006г, стр 16-22

սերվիսը և գործունեության նյութական արտադրությունը դրսևորվում են հաստատությունների ստեղծման գործընթացում, որոնք կարող են իրականացնել սերվիսային գործառույթներ: Գործունեության նյութական ոլորտին են վերաբերում մարդու որոշակի պահանջմունքների բավարարումը (բժշկական, առօրյա ծառայություններ, հասարակական սննդի ծառայություններ, ծառայություններ սպորտի և ֆիզիկական կուլտուրայի բնագավառում):

Գործունեության ճանաչողական ձևը ուղղված է բավարարել մարդկանց ոչ նյութական, հոգևոր պահանջմունքները (ինֆորմացիայի կամ գիտելիքի հատկացում):

Այս տեսակի թվին են դասվում կրթական ծառայությունները, քանզի դրանք ոչ միշտ են ասոցացվում ինֆորմացիայի փոխանցման հետ, քանի որ ներառում են նաև շփման, դաստիարակման գործընթացը: Ժամանակակից հասարակությունում ինֆորմացիայի ստացման, վերլուծման, հավաքման և հատկացման գործընթացը վերածվել է գործունեության ինչ-որ ձևի: Այն զբաղեցնում է գործունեության լայն ոլորտ, որը կարելի է կոչել ինֆորմացիոն սերվիս:
Ամբողջ աշխարհում գործող բազմաթիվ հաստատություններ իրենց սպառողներին ապահովում են տեղեկատվական ծառայություններով: Վերջին տարիներին ինֆորմացիայի հատկացման գլխավոր տեխնիկական միջոցներից է դարձել ինտերնետը:

Արժեքային ուղղվածության նպատակն է սահմանել, թե մարդու համար ինչպիսի նշանակություն ունեն տվյալ երևույթները, սահմանել որոշակի վերաբերմունք նրանց հանդեպ և տալ գնահատական: Այդ գնահատականը, իհարկե, կախված է մարդուց և այն միջավայրից, որտեղ նա ապրում է:

Արժեքային ուղղվածության սերվիսը իրականացվում է՝ գովազդի միջոցով, հետաքննության միջոցով, գեղարվեստական-նախագծման գործունեության միջոցով, կրոնական բնույթի ծառայությունների միջոցով:
Գործունեության կոմունիկացիոն ձև: Սա առանձին հաստատությունների կամ անհատների միջև շփման կազմակերպումն է: Սերվիսային գործունեության այս տեսակի մեջ են մտնում հանդիպումների, պրեզենտացիաների, ցուցահանդեսների, խորհրդաժողովների կազմակերպումը, շփումը համացանցում, թարգմանչական ծառայությունները, ինչ-որ չափով նաև մասսայական ինֆորմացիայի ստացման գործընթացը, կապի ծառայությունները:

Անհատական շփումների կազմակերպման դեպքում սերվիսը նպատակ է ունենում ստեղծել մարդկային ուղղակի կապի և շփման պայմանները: Այն միշտ գոյություն կունենա, քանի որ թույլ է տալիս գտնել շփման և միմյանց հասկանալու ամենահարմար հնարավորություններն ու ուղիները: Շփումը նամակագրության (Հեռագրության) միջոցով պահանջում է ծառայությունների այլ տեսակներ (փոստի ծառայություններ, կնիքային տեղեկատվություն): Եվ վերջապես, էլեկտրոնային սարքերի միջոցներով իրականացվող սերվիսը կտրուկ ընդարձակում է շփման հնարավորությունները, դարձնելով այն ավելի արդյունավետ, որոշակիորեն, հաղթահարում է տարածական խնդիրները և մասամբ վերականգնում ուղղակիորեն միջանձնական շփման մեխանիզմները:

Սերվիսային գործունեությունը ապահովում է սպառողների գումարների և ժամանակի խնայողություն, իսկ ամենակարևորը նպաստում է կյանքի որակի բարձրացմանը: Վերջինս ապրելակերպի և կենսամակարդակի փոփոխությունների արդյունք է և գնահատվում է մարդկային զարգացման ինդեքսով:

Սերվիսային գործունեության կազմակերպումը և զարգացումը սոցիալ տնտեսական առումով պետք է արդյունավետ լինի: Դա նշանակում է, որ սպասարկման ոլորտը պետք է իր արժանի տեղը ունենա տնտեսության մեջ և հասարակական կյանքում՝ նպաստելով բնակչության բարեկեցության և եկամուտների ավելացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, կյանքի որակի բարելավմանը և աղքատության կրճատմանը, ընդհանուր տնտեսական կյանքի աշխուժացմանը և այլն: Ինչպես հայտնի է սպասարկման ոլորտի զարգացման մակարդակը առհասարակ տնտեսության զարգացման մակարդակի կարևոր ցուցիչ է: Այս երկուսի միջև կա ուղիղ համեմատական կապ:

Սերվիսային գործունեությունը իր հնարավորությունների ներածին չափով պետք է միտված լինի միջմշակութային երկխոսության և հանդուրժողականության ձևավորմանը, մշակութային արժեքների ու բազմազանության պահպանմանը, բնակչության սոցիալ- մշակութային ինտեգրմանը և այլն:

Սերվիսային գործունեությունը, լինելով պահանջմունքների բավարարման միջնորդավորված ձև, կարևոր խթան է հասարակական կյանքի մյուս ոլորտների՝ արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման, վերջինս էլ պայմաններ է

ստեղծում սերվիսային գործունեության զարգացման համար[6]:

Արդյունաբերության զարգացումը հնարավորություն է տալիս ավելի շատ նյութական միջոցներ ուղղել սերվիսի ոլորտ, անհրաժեշտ տեխնիկական միջոցներով առավել արդյունավետ դարձնել սերվիսային գործունեությունը, զարգացնել անհրաժեշտ ենթակառուցվածքները:

Սերվիսային գործունեության մակարդակով կարելի է որոշել երկրի զարգացման աստիճանը: Որքան զարգացած է երկիրը, այքան բարձր մակարդակի վրա է գտնվում սերվիսը: Զարգացած երկրների համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 70%-ից ավելին բաժին է ընկնում սերվիսի ոլորտին: ԱՄՆ-ի ՀՆԱ-ի մեջ սերվիսի ոլորտի տեսակարար կշիռը 77,7% է, Ճապոնիայինը՝ 74,3% , Եվրամիությանը՝ 73% : Զարգացած երկրներում մեծ է սերվիսային գործունեություն ապահովող աշխատողների տեսակարար կշիռը: Այն ԱՄՆ-ում 73% է, Ճապոնիայում՝ 70,9%, Եվրոմիությունում 72,2%: Սերվիսային գործունեության զարգացումը կապված է նաև երկրում մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի հետ: ԱՄՆ-ում այն 54600 դոլար է, Ճապոնիայում՝ 37600, Եվրամիությունում՝ 39200 դոլար:

Զարգացող երկրներում այս բոլոր փաստական տվյալների ծավալն ավելի ցածր է: ՀՀ-ում սերվիսի ոլորտի մակարդակը ՀՆԱ-ի մեջ 46,6% է, աշխատուժի ընդգրկվածությունը՝ 44%, 1 շնչին ընկնող ՀՆԱ-ի ծավալը 7400 դոլար:

Սերվիսային գործունեությունը, բովանդակային առումով, գործունեության ձևերով, զարգացման միտումներով, բարդ համակարգ է: Մարդու պահանջմունքներն անընդհատ մեծանում են, բարդանում, համապատասխանաբար անհրաժեշտություն է զգացվում գտնել դրանց բավարարման նոր ու նորագույն միջոցներ, կիրառման ավելի արդյունավետ ձևեր:

1.2 Սերվիսային գործունեության հիմնական տեսակները գյուղական բնակավայրերում

Մարդկանց պահանջմունքները բավարարվում են սերվիսային գործունեության, ծառայությունների մատուցման միջոցով: Սերվիսային գործունեությունը սպասարկման համակարգն է՝ իր առանձին բաղադրիչներով, դրանց գործունեության ձևերով: Այդ համակարգի արդյունքը հանդիսանում են մատուցված

[6] Ա.Ռ. Ավագյան Սերվիսագիտության հիմունքներ, Երևան 2017, էջ 132-134

ծառայությունները: Այն միավորում է տնտեսության այն ճյուղերն ու մարդկային գործունեության տեսակները, որոնք ուղղակիորեն չեն մասնակցում նյութական արժեքների ստեղծմանը, որոշում են մարդկանց ապրելակերպը, կյանքի մակարդակը, բարեկեցությունն ու սպառումը, բավարարում են նրանց հոգևոր և նյութական պահանջները: Սերվիային գործունեությունը իր մեջ ներառում է կենցաղային ծառայություններ՝ բեռնատար և ուղևորատար տրանսպորտի ծառայություններ, կապ, բնակարանային-կոմունալ ծառայություններ, կրթության համակարգի ծառայություններ, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ծառայություններ, իրավական, բժշկական, առողջարանային – առողջարարական ծառայություններ, մշակութային հաստատությունների ծառայություններ, զբոսաշրջային և էքսկուրսիոն ծառայություններ, անասնաբուժական ծառայություններ և այլն:[7] Սերվիսային գործունեության զարգացումն ու տարածքային կազմակերպումը պայմանավորող գլխավոր գործոններն են՝ բնակավայրի տնտեսական զարգացման մակարդակը, բնակչության թիվը և կազմը, կենսամակարդակը, տարաբնակեցման բնույթը, աշխատանքային ռեսուրսների թիվն ու որակը, տրանսպորտային համակարգի զարգացման մակարդակը:Սերվիսային գործունեության նշված տեսակները կարևորվում են հատկապես գյուղական բնակավայրերում, որտեղ թույլ է զարգացած նման ենթակառուցվածքները: Ներկայումս գյուղական բնակավայրերում սպասարկման ենթակառուցվածքների համալրումը և ճիշտ կազմակերպումը կարևոր գործընթաց է և նպաստում է ինչպես տվյալ բնակավայրի, այնպես էլ տարածաշրջանի սերվիսային գործունեության և դրա հետ մեկտեղ նաև զբոսաշրջության զարգացմանը: Ինչպես գիտենք ներկայումս գյուղական բնակավայրերը համարվում են պետության խոցելի շրջաններ, ուստի հարկավոր է առավել մեծ ուշադրություն հատկացնել վերջիններիս զարգացմանն ու անհրաժեշտ միջոցների ներդրմանը: Գյուղական բնակավայրերում սերվիսային գործունեության օբյեկտների տեղաբաշխումը մեծապես կախված է բնակավայրի բնակչության խտությունից, և որքան կենտրոնական տեղ է գրավում գյուղը տարածաշրջանում, այնքան շատ են այդտեղ առկա սպասարկման ոլորտի տեսակները: Գյուղական բնակավայրերում սերվիսային գործունեության տեսակներից առավել լայն տարածում ունի առևտուրը, քանի որ այն համարվում է մարդկանց կենսական պահանջմունքների բավարարման գլխավոր ճյուղը: Առևտուրը գյուղական բնակավայրերում իրականացվում է

[7] Խաչատրյան Ն., Գասպարյան Կ., Ծառայությունների էկոնոմիկա: Ուսումնական ձեռնարկ, Եր.,Եդիթ Պրինտ, 2013, էջ 30-34

մանրածախ սկզբունքով: Հիմնականում վաճառվում է ամենօրյա պահանջարկ ունեցող ապրանքներ: Յուրաքանչյուր բնակավայրի համար առանձնակի նշանակություն ունի բժշկական, առողջարարային-առողջարարական ծառայությունների առկայությունը: Ցանկացած գյուղական բնակավայրում առկա է նման ծառայություն մատուցող հաստատություն: Սա կարևոր նախապայման է ինչպես տեղաբնիկների, այնպես էլ գյուղ այցելող զբոսաշրջիկների համար, վերջիններիս անվտանգությունը ապահովելու նպատակով: Սերվիսային գործունեության արագ զարգացող ճյուղերից են կապն ու տեղեկատվությունը: Վերջին տասնամյակներին <<Համակարգչային հեղափոխության>> շնորհիվ տեղեկատվությունը ձեռք է բերել ապրանքի բոլոր հատկանիշները, սկսել է գնվել ու վաճառվել: Ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղական բնակավայրերում կտրուկ աճում է համակարգիչներից, ինչպես նաև համացանցից օգտվողների թիվը: Ներկայումս տեղեկատվության հաղորդումն ու փոխանակումն ապահովող ճյուղը՝ կապը, դարձել է ՀՀ տնտեսությանը սպասարկող հատուկ կարևորության ճյուղ: Այժմ կապի ծառայության մակարդակը, այդ ծառայությունն իրականացնող հիմնարկների թիվը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր չափանիշ են: Կապն ու տեղեկատվությունը հիմք են հանդիսանում ինչպես ամբողջ երկրի, այնպես էլ մասնավորապես գյուղական բնակավայրերի սերվիսային գործունեության զարգացման կարևոր նախապայման: Այն հնարավորություն է ընձեռում գյուղաբնակներին և զբոսաշրջիկներին ձեռք բերել անհրաժեշտ տեղեկատվություն: Գյուղական բնակավայրերում առանձնահատուկ տեղ է հատկացվում կրթությանը և մշակույթին, քանի որ մշակութային այնպիսի արժեքներ, որոնք արտացոլում են տվյալ ազգի նկարագիրը ունեն գյուղական արմատներ:Այդպիսիք կարևոր գործոն են տվյալ բնակավայրի սերվիսի և զբոսաշրջության զարգացման համար: Գյուղական բնակավայրերում կրթական և մշակութային սերվիսի օբյեկտներ են հանդիսանում՝ նախադպրոցական և հանրակրթական հիմնարկները, երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցները, դպրոցին կից գրադարանները, թանգարանները: Ինչպես գիտենք զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության արագ զարգացող ճյուղերից է: Մեր հանրապետությունում նույնպես զբոսաշրջությունը հայտարարված է տնտեսության առաջնահերթ նշանակության ճյուղ և զարգանում է բարձր տեմպերով: Ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղական բնակավայրերում կառուցվում են հյուրանոցներ, զբոսաշրջային հանգրվաններ և գործում են ոչ պետական զբոսաշրջային կազմակերպություններ:

Այսպիսով վերը նշված դիտարկումներից կարող ենք եզրակացնել, որ ներկայումս գյուղական բնակավայրերում սերվիսային գործունեության տեսակները ընդլայնվել են, ձեռք են բերել համատարած բնույթ և իրենցից ներկայացնում են սերվիսային գործունեության կազմակերպման հատկանշական նախադրյալ:

1.3 Սերվիսային գործունեության կազմակերպման տարածքային առանձնահատկությունները

Սերվիսային գործունեության կազմակերպման տարածքային առանձնահատկությունները բացահայտելու համար նախ և առաջ անհրաժեշտ է հստակ տարբերել <<տարածքային տեղաբաշխում>> և <<տարածքային կազմակերպում>> հասկացությունները:

Առհասարակ տարածքային տեղաբաշխում ասելով պետք է հասկանալ աշխարհագրական օբյեկտների և երևույթների բաշխվածությունը տարածության մեջ՝ նրանց աշխարհագրական հասցեն՝ գտնվելու վայրը: Այս դեպքում առավել կարևորվում է «որտե՞ղ» հարցը:

Տարածքային կազմակերպումը ավելի լայն հասկացություն է: Այն ընդգրկում է աշխարհագրական օբյեկտների, երևույթների, գործընթացների, բնակավայրերի, տնտեսության ճյուղերի և ձեռնարկությունների ոչ միայն տեղաբաշխումը տարածության մեջ, այլ նաև դրանց միջև փոխադարձ տարածական կապերի, հարաբերությունների, առընչությունների ձևավորումը և զարգացումը: Այս դեպքում, «որտե՞ղ» հարցից բացի, կարևորվում են նաև «ինչո՞ւ» և «ինչպե՞ս» հարցերը:

Տարածքային կազմակերպումը կարելի է արտահայտել բանաձևի տեսքով՝

Տարածքային կազմակերպում = Տարածքային տեղաբաշխում + փոխադարձ կապեր և հարաբերություններ:

Հասարակության տարածքային կազմակերպումը իրենից ներկայացնում է մարդկանց կյանքի և աշխատանքային գործունեության տարբեր ոլորտների ու ճյուղերի փոխկապակցված տարածական տեղաբաշխումը: Այն հավասարապես վերաբերվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներին՝ տնտեսական, սոցիալական, քաղաքական, հոգևոր-մշակութային, բնապահպանական:[8]

[8] Ավագյան Ռ. –Պահանջմունքերի և դրդապատճառների դերը հասարակական կյանքի

Հասարակության տարածքային կազմակերպումը կարելի է ներկայացնել 2 իմաստով՝ որպես գործընթաց և որպես գործընթացի արդյունք: Այսինքն՝ կազմակերպվածության որոշակի աստիճան կամ մակարդակ:

Սպասարկման ոլորտը լինելով հասարակական կյանքի տնտեսական ոլորտի բաղադրիչներից ևս ենթակա է տարածքային կազմակերպման օրինաչափություններին:

Ընդհանուր առմամբ, սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպումն ընդգրկում է.

ա. բնակչության սպասարկման ծառայությունների, սպասարկման կազմակերպությունների տարածական տեղաբաշխումը,

բ. դրանց միջև փոխադարձ տարածքային կապերի, հարաբերությունների ձևավորումը:

Արդյունքում ձևավորվում է սպասարկման ոլորտի տարածքային կառուցվածքը: Այն իրենից ներկայացնում է որոշակի տարածքում ձևավորված սպասարկման օբյեկտների փոխկապակցված ամբողջությունը՝ սպասարկման տարածքային ցանցերի և համակարգերի տեսքով: Այն ևս հավասարապես դիտվում է թե որպես գործընթաց և թե որպես դրա արդյունք:

Սերվիսային գործունեության կազմակերպման տարածքային առանձնահատկությունները ուսումնասիրելիս պետք է հաշվի առնել, որ ծառայությունները ըստ մատուցման և սպառման բնույթի լինում են՝

- ամենօրյա օգտագործման
- պարբերական օգտագործման (հաճախությունը ամսական մի քանի անգամ կամ շաբաթական 1 անգամ)
- դիպվածային օգտագործման (տարեկան մի քանի անգամ հաճախությամբ)
- բացառիկ օգտագործման

Ամենօրյա և պարբերականի թվին են դասվում օրինակ՝ նախակրթական և

տարածքային կազմակերպման մեջ, 2017թ., ԵՊՀ, էջ 1-5

կրթական հաստատությունները, պոլիկլինիկաներն ու դեղատները, սննդամթերքի և կենցաղային իրերի խանութները, հասարակական սննդի օբյեկտները ևն: Դիպվածային և բացառիկ սպասարկման օբյեկտների թվին են դասվում հատուկ մասնագիտացում ունեցող սերվիսային հաստատությունները (բնականաբար այցելության տարբեր հաճախություն ունեցող հաստատությունները կունենան տարածքային կազմակերպման տարբեր սկզբունքներ և օրինաչափություններ):

Սերվիսի զարգացման տարածքային տարբերությունները կարելի ներկայացնել ծառայությունների կազմակերպման մակարդակներով, ՀՀ օրինակով կարելի է առանձնացնել հետևյալ մակարդակները՝

• սպասարկման մարզային կենտրոն

• սպասարկման շրջանային կենտրոն

• սպասարկման տեղական կենտրոն

• սպասարկման համայնքային կենտրոն

Սպասարկման մարզային կենտրոնը բավարարում է մարզի բնակչության պահանջմունքները՝ գրեթե բոլոր ծառայությունների գծով, այդպիսիք են՝ ՀՀ տաս մարզկենտրոնները:

Շրջանային կենտրոնը սպասարկում է մարզի ավելի փոքր տարածքների բնակչությանը (ՀՀ նախկին այն շրջկենտրոնները, որոնք այժմ մարզկենտրոնի կարգավիճակ չունեն՝ Ստեփանավան, Արարատ, Սևան, Գորիս, Արթիկ և այլն):

Տեղական կենտրոնը սպասարկում է շրջաններից ավելի փոքր տարածքների բնակիչներին (շրջանների առանձին հատվածներ կամ մի քանի բնակավայրերի խմբեր) այդպիսիք այն խոշոր գյուղերն են, որոնց ծառայություններ մատուցող հաստատություններից օգտվում են նաև հարակից գյուղերի բնակիչները: Այսպիսի կենտրոններում հիմնականում տեղակայված են բնակչության տարրական պահանջմունքները բավարարող ծառայություններ մատուցող ձեռնարկություններ ևն:

Համայնքային կենտրոնը բավարարում է քաղաքային կամ գյուղական համայնքի, ինչպես նաև բնակավայրի առանձին թաղամասի բնակչության պահանջմունքները ամենօրյա բնույթի ծառայությունների գծով: Այդպիսիք են համայնքապետարանները, բժշկական կետերը, նախակրթական և կրթական հաստատությունները, մշակույթի

տները, ամենօրյա օգտագործման ծառայություններ մատուցող ձեռնարկությունները (խանութներ, դեղատներ, կրպակներ) և: Սպասարկման ոլորտի տարածքային կազմակերպման հետ սերտորեն առնչվում են առևտրային շրջան և սպասարկման շառավիղ հասկացությունները, որոնք ի սկզբանե առաջարկվել են ամերիկյան մարկետոլոգների կողմից և օգտագործվել են ռեստորանների օպտիմալ տեղադիրքը ընտրելու նպատակով: Առևտրային շրջանը սերվիսային ձեռնարկության կողմից սպասարկվող և նրան շրջապատող այն տարածքն է, որը ապահովում է տվյալ ձեռնարկության հաճախորդների առնվազն 50% -ը: Սպասարկման շառավիղը այն տարածական հեռավորությունն է, որը ընկած է տվյալ ձեռնարկության և նրա հաճախորդների բնակության վայրերի միջև: Ամենօրյա և պարբերական ծառայություններ մատուցող ձեռնարկությունները ունեն փոքր առևտրային շրջան և կարճ սպասարկման շառավիղ, այսինքն՝ առավելագույնս մոտ են տեղաբաշխված սպառման շրջաններին: Մինչդեռ բացառիկ և դիպվածային օգտագործման օբյեկտները սովորաբար ունենում են անհամեմատ ավելի մեծ առևտրային շրջան և երկար սպասարկման շառավիղ:

Սերվիսային գործունեության տարածքային կազմակերպման վրա ազդում են բազմաթիվ գործոններ, որոնք միավորվում են հետևյալ հիմնական խմբերում՝

- տնտեսական
- սոցիալական
- ժողովրդագրական
- աշխատանքային ռեսուրսների
- տարաբնակեցման
- տրանսպորտային
- բնական

Տնտեսական: Տարածաշրջանի տնտեսական զարգացման ընդհանուր մակարդակը, բնակչության եկամուտները, աշխատավարձի չափը և այլն:

Սոցիալական: Բնակչության սոցիալական և մասնագիտական կազմը, կրթական մակարդակը, քաղաքային կամ գյուղական ապրելակերպը, բնակչության զբաղվածության աստիճանը և բնույթը, առողջապահական, սանիտարահիգիենիկ պայմանները և այլն:

Ժողովրդագրական: Բնակչության թիվը և աճի տեմպերը, սեռատարիքային կառուցվածքը, աշխատունակ բնակչության տոկոսը, ընտանիքների կազմը, չափերը, երեխաների թիվը, կենցաղային և ազգային առանձնահատկությունները:

Աշխատանքային ռեսուրսները: Ծառայությունների ոլորտում զբաղվածների թիվը և լրացման հնարավորությունները, նոր կադրերի պատրաստման հնարավորությունները:

Տարաբնակեցման: Բնակչության խտությունը և տեղաբաշխման համաչափությունը, բնակավայրերի տիպերը, դրանց մեծությունը, միմյանցից ունեցած հեռավորությունը և այլն:

Տրանսպորտային: Տարածքի ապահովվածությունը տրանսպորտային ուղիներով, սպասարկման կենտրոնների տրանսպորտային մատչելիությունը և այլն:

Բնական: Տարածքի բարենպաստ կամ անբարենպաստ բնակլիմայական պայմանների ազդեցությունը սպասարկման ոլորտի և ծառայությունների առանձին տեսակների զարգացման և տեղաբախման վրա:

ԳԼՈՒԽ 2. ԲՅՈՒՐԱԿԱՆ ԳՅՈՒՂԸ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ԱՌԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Բյուրականի ՏԱԴ-ը որպես սերվիսի զարգացման նախադրյալ

Աշխարհագրական դիրքի տարատեսակներից յուրաքանչյուր բնակավայրի համար առանձնահատուկ կարևորություն ունեն տնտեսաաշխարհագրական (ՏԱԴ) և քաղաքաաշխարհագրական (ՔԱԴ) դիրքերը: Ցանկացած տարածքի տնտեսության ուսումնասիրման և զարգացման համար կարևոր է ՏԱԴ-ի դերը: Տնտեսաաշխարհագրական դիրքը ձեռնարկությունների, բնակավայրերի, արեալների, շրջանների ու դրանց խմբերի և այն արտաքին օբյեկտների հարաբերությունների ամբողջությունն է, որոնք դրանց համար ունեն տնտեսական նշանակություն: Խոսքը գնում է աշխարհագրական օբյեկտների տարածական հարաբերությունների մասին, որոնք կարող են լինել բազմազան, և որոնց ամբողջությունը կարող է էական ազդեցություն ունենալ օբյեկտի վրա, որոշելով դրա տնտեսական, սոցիալական, ու քաղաքական զարգացման պայմանները և նշանակությունը: Բնակավայրի ՏԱԴ-ը ձևավորվում է հասարակական երևույթների

ազդեցությամբ և ենթակա է այնպիսի արագ փոփոխությունների, որոնք կարող են տեղի ունենալ, ինչպես արտաքին, այնպես էլ ներքին պատճառների առկայությամբ:[9] Ընդհանրապես ՏԱԴ-ի գործոնները շատ բազմազան են: ՏԱԴ-ի գործոնը ցույց է տալիս թե բնակավայրը ինչպիսի տարածքում է գտնվում և իր հարևանությամբ ինչպիսի բնակավայրեր կան (ըստ զարգացման մակարդակի): Հարմար ՏԱԴ-ը բնակավայրի տնտեսական զարգացման լրացուցիչ խթան է: Բնակավայրի զարգացման համար անհրաժեշտ է տրանսպորտային կարևորագույն ուղիների առկայությունը՝ արդյունաբերական և տնտեսական շրջանների նկատմամբ: ՈՒսումնասիրելով որևէ տարածքի ՏԱԴ-ը պետք է հաշվի առնել մի շարք կարևոր առանձնահատկություններ: Դրանցից են՝ տարածքային, բնառեսուրսային, տրանսպորտային, աշխատանքային ռեսուրսների, տարածքային համակենտրոնացման, բնապահպանական և այլ առանձնահատկությունները: Վերը նշված գործոններն ու առանձնահատկությունները հանդիսանում են կարևոր նախադրյալ Բյուրական գյուղի սերվիսի զարգացման համար: Բյուրական գյուղը գտնվում է Արագածոտնի մարզում՝ մարզկենտրոն ք.Աշտարակից 11 կմ հեռավորության վրա: Այս հեռավորությունը մեծ չէ, ինչը նպաստավոր պայմաններ է ստեղծում սերվիսի զարգացման համար:[10]

Ք.Աշտարակի տարածքով անցնում է համապետական նշանակության 3 ավտոճանապարհ՝

1. Երևան-Աշտարակ-Թալին-Գյումրի
2. Երևան-Աշտարակ-Ապարան-Սպիտակ
3. Երևան- Արմավիր-Քարակերտ-Գյումրի

[9] Теория и методология географической науки / М.М.Голубчик, С.П.Евдокимов, Г.Н.Максимов, А.М.Носонов. М.: Владос, 2005, с.262

[10] Ա. Պոտոսյան, Հայաստանի գյուղական բնակչությունը և բնակավայրերը, ԵՊՀ,- Եր.: Աստղիկ գրատուն, 2013, էջ173-180

Քարտեզ 1. ՀՀ Արագածոտնի մարզի ճանապարհներ

Տրանսպորտային կարևոր մայրուղիներին մոտ լինելու առկայությունը նույնպես կարևոր նախադրյալ է հանդիսանում գյուղում սերվիսային գործունեության զարգացման համար: Բյուրական գյուղը մայրաքաղաք Երևանին կապող ճանապարհը կարճ է՝ 35կմ: Մայրաքաղաք կարող ենք հասնել ընդամենը 35-40 րոպեում: Դա հնարավորություն է տալիս գյուղի բնակչությանը հաղորդակցվել և կապ պահպանել Երևան քաղաքի սպասարկման մի շարք ոլորտների հետ՝ կրթական, առողջապահական, առևտրային, բանկային և այլն:[11] ՏԱԴ-ի բարենպաստ նախադրյալների միջոցով սերվիսի զարգացմանն ուղղված միջոցառումները գնալով մեծանում են: Բյուրական գյուղի ՏԱԴ-ը կարևոն գործոն է հանդիսանում սերվիսի զարգացման համար: Դրանք կապված են գյուղի աշխարհագրական դիրքի, բարձրաչափական առանձնահատկությունների, կլիմայական պայմանների, կենդանական և բուսական աշխարհի, երկրաբանական առանձնահատկությունների հետ: Գյուղի հարակից գյուղական բնակավայրերը ունեն փոքր տարածք և քիչ բնակչություն, ինչն էլ ազդում է, որ այդ բնակավայրերի բնակչությունը օգտվի Բյուրական գյուղի սպասարկման կետերից: Բյուրականի ՏԱԴ-ի կարևոր բնութագրիչներից մեկն էլ այն է, որ նա գտնվում է կարևոր տարանցիկ ուղղու վրա, որը կապում է իրար հարակից բնակավայրերը և հասնում մինչև Արագածի բարձր լեռնային Քարի լիճ և Ամբերդ ամրոց: Այս տեսակետից Բյուրականի սերվիսի զարգացմանը էապես նպաստում է նաև զբոսաշրջությունը: Քանի որ Ամբերդ տանող ճանապարհը անցնում է Բյուրական գյուղի միջով, զբոսաշրջիկները մեծամասամբ օգտվում են Բյուրականի սերվիսային օբյեկտներից, ինչը վկայում է Բյուրականի բարենպաստ տնտեսաաշխարհագրական դիրքի՝ որպես սերվիսի զարգացման նախադրյալի մասին: Մայրուղու որոշ հատվածներ անցնում են բնական անտառի միջով, որտեղ կան հանգստի գոտիներ: Բյուրականի ՏԱԴ-ը ուսումնասիրելիս կարող ենք առանձնացնել մի կարևոր հանգամանք, որ գյուղը ունի այնպիսի բնակլիմայական պայմաններ, ռեսուրսներ և աշխարհագրական դիրք, որը հանդիսանում է կարևոր նախապայման մի շարք սերվիսային ձեռնարկությունների ստեղծման և զարգացման համար: Գյուղում կան մի շարք հանգստյան տներ, որոնք վկայում են գյուղի բարենպաստ բնակլիմայական առանձնահատկությունների մասին: Քանի որ

[11] https://www.armstat.am/am/?nid=21 Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե– 04.03.2019 12:45:

տնտեսաաշխարհագրական դիրքը սերտորեն փոխկապակցված է տվյալ բնակավայրի աշխարհագրական դիրքի հետ, և քանի որ Բյուրական գյուղը կենտրոնական դիրք է գրավում հարևան բնակավայրերի նկատմամբ՝ կարող ենք նշել, որ այս հանգամանքով է պայմանավորված սերվիսային ձեռնարկությունների ստվար տեղաբաշխվածությունը գյուղում: Բյուրականի տնտեսաաշխարհագրական դիրքի մասին խոսելիս պետք է նշենք նաև գյուղի սերվիսի զարգացման հնարավորությունների, հավանական ուղղությունների և պոտենցիալի մասին: Բյուրականում կան շատ տարածքներ որոնք ունեն տնտեսաաշխարհագրական բարենպաստ պայմաններ, և մեծ պոտենցիալ սերվիսային գործունեության կազմակերպման համար սակայն դեռևս յուրացված չեն, և միայն ճիշտ մարտավարության կիրառման դեպքում դրանք կարող են հանդիսանալ գյուղի սերվիսի զարգացման կարևոր նախադրյալ: Այդուհանդերձ, չի կարելի ՏԱԴ-ի նշանակությունը բացարձականացնել:Դա ինչքան էլ կարևոր, բայց բոլոր դեպքերում մեկն է միայն սոցիալ-տնտեսական երևույթների զարգացումը կանխորոշող գործոններից: Եվ դրա իրական նշանակությունը կախված է այն բանից, թե ինչպես է օգտագործվում ՏԱԴ-ի ընձեռնած հնարավորությունը:

2.2 Բյուրական գյուղի բնութագիրը

Բյուրական գյուղը գտնվում է Արագածոտնի մարզում, Արագած լեռան հարավարևելյան լանջին, Ամբերդ գետի ձախ ափին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1475 մ: Ընդհանուր տարածքը՝ 3200 հա: Բյուրական գյուղը նախկինում հայտնի է եղել նաև՝ Բիրական, Պիրական, Փիրական անվանումներով: Ռուսական աղբյուրներում երբեմն նշանակված է Պիրական ձևով: Այլազգիները անվանել են Բիրական կամ Փիրական:[12]

[12] Թ.Խ. Հակոբյան, Ստ.Տ. Մելիք-Բախշյան, Հ.Խ. Բարսեղյան Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևան, 1986-2001, էջ 708

Նկար 1. Տեսարան Բյուրական գյուղից

Իր բյուր աղբյուրների բազմազանությամբ այն կոչվել է Բյուրական՝ հազարավոր աղբյուրների գյուղ: Բյուրականը հին, մարդաշատ բնակավայր է եղել և հիշատակվում է նաև որպես ավան: Բյուրականը պատմական Հայաստանի Արագածոտն գավառի ամենահին բնակավայրերից մեկն է եղել, որի բնակիչները մասնակցություն են ունեցել հայ ժողովրդի բազմադարյան պատմության Արագածոտն գավառում տեղի ունեցող ռազմական, հասարակական-քաղաքական, կրոնական և մշակութային կյանքի անցուդարձին: Բյուրականի հիմնադրման ժամանակաշրջանը ճշգրտորեն վերականգնելն անհնար է, սակայն հնադարյան բնակատեղերի, քարանձավների և այլ պատմական հուշարձանների առկայությունը ցույց է տալիս, որ այստեղ մարդն ապրել է դեռևս հազարամյակներ առաջ: Գյուղի հին ճանապարհը անցել է հարավ-արևմուտքից Ագարակ - Ծոփանիս գյուղերով, հետագայում՝ Փարպի գյուղով: 1831 թվականին գյուղը ուներ 240, 1897 թ.՝ 1354, 1926 թ.՝ 2123, 1939 թ.՝ 2606, 1959 թ.՝ 2435, 1970 թ.՝ 3185, 1979 թ.՝ 3344 հայ բնակիչ: Այս պահի դրությամբ գյուղում ապրում է 4713 բնակիչ[13]: Որից իգական՝ 2341, արական՝ 2372: Ըստ Ղևոնդ Ալիշանի, Բյուրականը 10-րդ դարում եղել է Արագածոտնի մարզի հայաբնակ ամենամեծ գյուղերից մեկը, 120 տուն, մինչ Նըսըրի հարձակումը՝ 923 թ.: Առաջին անգամ հիշատակում է պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը (10-րդ դար): Դրասխանակերտցին այստեղ կառուցել է եկեղեցի և հիմնադրել կուսակրոնների միաբանություն:

[13] http://byurakan.com.am Բյուրականի գյուղապետարանի պաշտոնական կայքէջ, 06.03.19, 18:30:

1467 թ. մի հիշատակարանում հիշատակված է Բյուրականի վանք (մենարան) ՝ Ս.Աստվածածին և Ս.Հովհաննես եկեղեցիներով: 1835 թվականին ռուս պաշտոնյաները և 1874 թվականին Գևորգ 4-րդ կաթողիկոսը այստեղ ամառանոցներ են հիմնում: Այժմ Բյուրականում են գտնվում Սուրբ Հովհաննես եկեղեցին(10-րդ դար) և 7-րդ դարում կերտված Արտավազիկ եկեղեցին: Ս. Հովհաննես եկեղեցին գտնվում է գյուղի կենտրոնում, իսկ Արտավազիկը՝ արևելյան ծայրում: Ըստ 1428թ. մի ձեռագրի, Բյուրականում եղել է նաև Նշան անունով եկեղեցի, որը, հավանաբար, գտնվում է ամրոցում և անհետ կործանվել է:

Սուրբ Հովհաննես եկեղեցու հատակագծի ձևը և հարդարանքի նմանությունը բազմաթիվ տարրերով համընկնում է Հայաստանի 6-7-րդ դարերի ճարտարապետությանը, որոնք հիմք են հանդիսանում ենթադրելու, որ Բյուրական գյուղը հիմնադրվել է 7-րդ դարում:

Բյուրականում են Ս.Աստվածածին, Ծիրանավոր և Կիրակնամուտ մատուռները:

Բյուրականից 3 կմ հյուսիս գտնվում է Այծաբերդ (մ.թ.ա.2-րդ-1-ին հազարամյակ) ամրոցը, Ամբերդ գետի արևելյան ափին, անտառի մեջ: Մի փոքր դեպի հարավ՝ «Անտառուտ» ամրոցը (մ.թ.ա. 2-րդ-1-ին հազարամյակ), 2 կմ հարավ-արևմուտք՝ «Սոփանես» (10-18-րդ դարեր) և «Փոս» (10-18-րդ դարեր) գյուղատեղիները, 2 կմ հյուսիս՝ «Ճգնավոր» քարայր-կացարանը (13-19-րդ դարեր) , «Ցից քար» զոհարանը (մ.թ.ա. 2-րդ հազարամյակ), Շիշկոնդ ամրոցը, Զույգ աղբյուր ամրոցը, Պառավկոնդը:[14]

Այստեղ է գտնվում նաև «Հայկաշեն» կաթողիկոսարան-առանձնատունը (1972 թ.): 1874 թվականին Գևորգ Դ կաթողիկոսը հիմնել է Հայրապետական իր ամառանոցը: Հետագայում այն ծառայել է որպես պահեստ, ապա՝ դպրոց, երաժշտական դպրոց, այժմ՝ Խրիմյան Հայրիկ կրթօջախ: Բյուրականում բազմաթիվ անգամ եկել և Հայրապետական ամառանոցում հանգստացել են Խրիմյան Հայրիկն ու Կոմիտասը:

Բյուրականում պահպանվել են 10-ից մինչև 20-րդ դարերի շուրջ 7 մեծ ու փոքր գերեզմանատներ: Գյուղում կան մի շարք աղբյուր հուշարձաններ, խաչքարեր և մշակութային այլ կոթողներ: 1990 թվականին ժողովրդական վարպետ Հարութ Մարտիրոսյանի կողմից Բյուրականում քանդակվեց խաչքար ի նշան հայ-վրաց

[14] Թադևոսյան Ռ.Գ. Բյուրականը և բյուրականցիները, Եր., Լուսակն, 2015, էջ 40-44

բարեկամության, խաչքարը տեղափոխվեց Թբիլիսի: Նույն ժամանակում գյուղում տեղադրվեց Աղբյուր հուշարձան՝ նվիրված 1915-90թթ. Զոհերի հիշատակին:

Բյուրականը իր տեղադրությամբ աչք շոյող գյուղ է, որտեղից երևում է ամբողջ Արարատյան դաշտավայրը: Նախալեռնային բարեխառն բնակլիմայական պայմաններով, մաքուր օդով իսկական հանգստյան վայր է գյուղը, շրջապատված արևելյան կաղնու անտառներով և հանգստյան տներով: Բյուրականից դեպի հյուսիս 2 կմ. 1800-2300մ. բարձրության վրա տարածված է արևելյան կաղնու անտառը, որտեղ կա՝ կաղնի, եղևնի, թխկի, մասրենի, ալոճ, և այլ թփուտային ծառատեսակներ: Գյուղում և նրա շրջակայքում կան մի շարք բնական աղբյուրներ՝ Ժամի աղբյուր, Քոռ աղբյուր, Զույգ աղբյուր, Գռգռ աղբյուր ևն: Խմելու ջուրը բերված է 5 կմ հեռավորությունից: Հողատարածությունները ոռոգվում են Ամբերդ գետակի ջրով: Գյուղատնտեսական նշանակության հողերն են. վարելահողեր՝ 1600 հա, պտղատու այգիներ՝ 67 հա: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և պտղաբուծությամբ: Գյուղում այգեգործության մեջ հիմնականում զբաղվում են ծիրանի, խնձորի, դեղձի, տանձի, կեռասի և սալորի մշակությամբ: Հիմնական այգիները տնտեսությունների տնամերձ հողակտորներում են, որոնց միջին չափը 2700 քմ է: Տնամերձերում տարածված են նաև ընկուզենիները, որոցից յուրաքանչյուր տնտեսություն տարեկան ստանում է միջինը 500 կգ ընկույզ: Գյուղում տարածված է նաև ելակի մշակությունը, քանի որ գյուղի բնակլիմայական պայմանները նպաստավոր են դրա համար: Ստանում են որակյալ բերք, որը հիմնականում իրացվում է Երևան քաղաքում: Անասնապահությամբ զբաղվում են տնտեսությունների մոտ 90 %-ը: Սակայն հիմնականում արտադրանքն իրացվում է սեփական կարիքների բավարարման նպատակով: Գյուղի բնակչությունը հիմնականում զբաղված է հետևյալ ոլորտներում՝ գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն- 314 մարդ, հանքագործական արդյունաբերություն- 50 մարդ, հացի և հրուշակեղենի արտադրություն- 20 մարդ, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի – 10 մարդ, շինարարություն- 200 և ավելի, տրանսպորտ և կապ – 10 մարդ, առողջապահություն և սոցիալական ծառայություններ- 11 մարդ, կրթություն, այդ թվում նախադպրոցական՝ 74 մարդ: Բանակում ծառայողների թիվը հասնում է 67-ի, իսկ գործազրկությունը՝ 998-ի:[15] Բյուրականցիները հնուց եղել են արհեստավորներ: Զբաղվել են՝ դարբնագործությամբ, պայտագործությամբ, դերձակությամբ,

[15] http://byurakan.com.am Բյուրականի գյուղապետարանի պաշտոնական կայք, 15.03.19, 17:20

փայտամշակությամբ, ոսկերչությամբ, ատաղձագործությամբ, գորգագործությամբ: Այժմ արհեստով զբաղվում է գյուղում յուրաքանչյուր տնից մոտավորապես մեկը: Բյուրականում են ծնվել մի շարք անվանի մարդիկ՝ ՀՍՍՀ վաստակավոր նկարիչ Հ.Ս. Հովսեփյանը, 1919թ., ինժեներ- նախագծող՝ Գերասիմ Գևորգյանը, քանդակագործ՝ Արա Մաղաքի Հարությունյանը, մուլտ- սցենարիստ՝ Արագած Գագիկի Հովհաննիսյանը, գիտ.աշխատող՝ Օֆիկ Թորոսյանը:

Անհնար է պատկերացնել Բյուրականն առանց ժողովրդական բանահյուսության մաս կազմող ավանդույթների՝ տարբեր ծեսերի, տոների: Այստեղ է գտնվում <<Տոնացույց>> ժողովրդական թատրոնը: [16]«Տոնացույց» ժողովրդական թատրոնը հիմնադրվել է 2008 թվականին: Թատրոնի գերխնդիրն է հայ ժողովրդի տոների ու ծեսերի վերականգնումը՝ դրանք բեմականացումների թեման դարձնելու միջոցով, ինչպես նաև միջմշակութային կամուրջների ստեղծումը՝ աշխարհին ներկայացնելով հայկական մշակույթը: Թատրոնի 15 նվիրյալներից բաղկացած խումբը մասնակցել է մի շարք միջազգային ֆոլկլորային փառատոնների: Խմբի մասնակիցների մեծամասնությունը Բյուրականի երիտասարդներն են կազմում: Այստեղ այցելում են ինչպես տեղաբնիկներ, անպես էլ մեծ թվով զբոսաշրջիկներ:

«Երևանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոնի կողմից 2015 թվականի ապրիլի 3-ին բացվեց Բյուրականի արվեստի ակադեմիան:[17]

Նկար3.«Բյուրական» արվեստի ակադեմիա

[16] http://www.magaghat.am/archives/24086 Մագաղաթ.am կայքէջ, 16.03.19 , 11:10

[17] https://armenpress.am/arm/news, ԱՐՄԵՆՊՐԵՍ Հայկական լրատվական գործակալություն 19.03.19, 19:05

Նկար3 . «Բյուրական» արվեստի ակադեմիա

Ակադեմիայում անցկացվում են հայ մտավորականների հանդիպումներ և քննարկումներ՝ արդի կարևորության թեմաներով, անցկացվում են վարպետության դասընթացներ, համերգներ, շնորհանդեսներ և ցուցադրումներ՝ բոլոր արվեստագետների համար: Կառույցն իր տեսակով միակն է նաև ողջ տարածաշրջանում և աշխարհի մի քանի հանրահայտ փառատոնների ակադեմիաներից է, որոնց միավորում է երիտասարդ սերնդի երաժիշտ-կատարողներին բարձրակարգ երաժշտական մասնագիտական հմտությունների փոխանցման և միջազգային հռչակ ունեցող երաժիշտների հետ համատեղ արվեստի կերտման գաղափարը՝ հատուկ միջավայրում:

Տարիների ընթացքում աստիճանաբար զարգացել է գյուղը, կառուցվել են մասնավոր երկհարկանի շենքեր, հանգստյան տներ, սպասարկման մի շարք օբյեկտներ: Գյուղում առկա են բազմաթիվ դեստինացիաներ, որոնք կարող են դառնալ զբոսաշրջիկների համար գրավչություն ստեղծող գոտիներ: Այստեղ է գտնվում միջազգային ճանաչում ունեցող Բյուրականի աստղադիտարանը: Ձավեշտալի է,բայց լինելով փոքր գյուղ Բյուրականը հայտնի է աշխարհի այն խոշոր քաղաքների ցանկում, որտեղ ամենաշատն են անցկացրել աստղագիտական պաշտոնական միջազգային գիտաժողովներ:

Բյուրականում 1956 թվականին կառուցվեց միջն.դպրոց, որը, հետագայում ծառայել է որպես Սիրիուս գործարանի մասնաճյուղ, այնուհետև եվրադռների և լուսամուտների մասնավոր արտադրամաս, իսկ այժմ որպես՝ <<Հանդիսությունների և հանգստի կազմակերպման օջախ>>: Կից դասընթացներ են տեղի ունեցել նաև հայրապետական ամառանոցում: Ներկա դպրոցը՝ Հովհաննես Թումանյանի անվան միջն.դպրոցը գործում է 1979 թվականից: Այժմ դպրոցում սովորում է ավելի քան 450 աշակերտ:

Բյուրական գյուղն ունի մշակույթի տուն, որը կառուցվել և շահագործմանն է հանձնվել 1983 թվականին: Աշխատել է մինչև 2002 թվականը, սակայն 1992-ից մասամբ: Վերանորոգվել է 2013 թվականին: Այժմ այստեղ գործում են պարի և կարատեի խմբակներ: Կազմակերպվում են բազմաբնույթ ու բովանդակալի միջոցառումներ: Այստեղ գործել է նաև գրադարան, որն ունեցել է 12.500 կտոր

գրականություն:

Բյուրական գյուղում գործում է չոր մրգերի պատրաստման արտադրամաս, որը հիմնվել է 2014 թվականին: Արտադրանքը մեծ պահանջարկ է վայելում տեղական շուկայում և միջոցառումներ են ձեռնարկվում արտադրանքը արտահանելու համար: Կոոպերատիվի անդամները մշակում են փաթեթավորման տուփեր՝ արտադրանքը միջազգային շուկա դուրս բերելու համար: Քայլեր են ձեռնարկվում նաև զարգացնել ագրոտուրիզմը՝ տարածքը զբոսաշրջիկներին գրավիչ դարձնելու համար: Բյուրականի չրի արտադրամասը նպաստեց բնակչության բարեկեցությանն ու եկամուտների ավելացմանը, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Գյուղն ունեցել է կենցաղ սպասարկման տաղավար, որը գործել է 1960-1990 թթ. : Ունեցել է կարի արտադրամաս, կոշիկի վերանորոգման կետ և այլն: Գյուղն ունի մանկապարտեզ, որը կառուցվել է 1972 թվականին: Մանկապարտեզը վերաբացվել է 2006 թվականին: Նախատեսված է եղել 60 երեխաների համար: Հիմա հաճախում է 115 երեխա: [18]

Գյուղն ունի բարձրակարգ բուժամբուլատորիա, որը կառուցվել է 1966 թվականին: Մինչ ամբուլատորիայի կառուցումը, բուժարան ծառայել են տարբեր շինություններ: Ներկայիս մասնաշենքը հագեցած է ժամանակակից բուժ տեխնիկայով, որը սպասարկում է նաև հարևան Անտառուտ և Օրգով համայնքների բնակչությանը:

Բյուրական գյուղին սահմանակից են Օրգով, Ագարակ, Ձորափ, Անտառուտ, Փարպի, Բազմաղբյուր գյուղերը: Ունենալով կենտրոնական դիրք հարակից գյուղերի նկատմամբ Բյուրականի մի շարք սպասարկման կետերից՝ խանութներից, բուժամբուլատորիայից, մանկապարտեզից և այլ օբյեկտներից օգտվուն են նաև այդ գյուղերի բնակչությունը: Գյուղի շրջակայքում են՝ Արագածոտնի նախալեռնային տարածքների օթերևութաբանական կայանը, Երևանի ֆիզիկայի ինստիտուտի հանգստյան տունը, Նոր Ամբերդ կայանը՝ Տիեզերական ճառագայթների ուսումնասիրման, Արագածի գիտահետազոտական ինստիտուտի մասնաճյուղը:

[18] Թադևոսյան Ռ.Գ. Բյուրականը և բյուրականցիները, Եր., Լուսակն, 2015, էջ 187-191

2.3 Բյուրականի խոշոր սերվիսային ձեռնարկությունների նկարագիրը

Սերվիսային գործունեությանը կամ ծառայությունների ոլորտին ընդունված է հարաբերել տնտեսության մի շարք ճյուղեր՝ առևտուր, ֆինանսներ, տրանսպորտ, առողջապահություն, սպորտի, զվարճանքի ինդուստրիան և այլն:

Բյուրականում զարգացած են ծառայությունների հետևյալ տեսակները՝ կրթական, առողջապահական, տրանսպորտային, առևտրային ծառայությունները: Հատկապես մեծ է առևտրային ձեռնարկությունների դերը սերվիսի ոլորտում: Կարևոր է այն փաստը, թե այդ սերվիսային ձեռնարկությունները ինչ մակարդակի վրա են գտնվում և ինչ կայուն զարգացում են ապահովվում:

Բյուրականում են գտնվում՝ Բյուրականի աստղադիտարանը, Աստղադիտարանի հյուրանոցը, <<Օջախ>> ռեստորանային համալիրը, << Հյուսիսային աստղ>>հյուրանոցը, Արվեստի ակադեմիան: Գյուղում կան արդյունաբերական ձեռնարկություններ՝ հացի և հրուշակեղենի արտադրություն, չոր մրգերի պատրաստման արտադրություն, գազավորված ըմպելիքների արտադրություն, հանքագործական արդյունաբերություն ևն: Գյուղում կա 1 տուն-թանգարան՝ Վիկտոր Համաբարձումյանի տուն-թանգարանը: Բյուրականում հաշվվում է ավելի քան 20 խանութ, որոնցից 3-ը՝ տնտեսական ապրանքների խանութներ են, հագուստի վերանորոգման կետ, 2 ավտոլվացման կետ, 2 դեղատուն, ավելի քան 6 գեղեցկության սրահ, ավելի քան 6 մասնագիտացված խանութներ՝ մրգի և բանջարեղենի, գեղարվեստի դպրոց, կապի բաժանմունք, Հայփոստի 1 բաժանմունք, բուժամբուլատորիա: Գյուղն ունի կիսավարդագույն և կարմիր տուֆ տեսակի քարհանքներ: Բյուրականում գործում է 1 հատուկ դպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 մշակույթի կենտրոն, 1 մարզահամալիր:

Սերվիսային ձեռնարկություններից մեծ ճանաչում ու հռչակ է վայելում Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանը: Աստղադիտարանը հիմնադրվել է 1946 թվականին՝ Աստղադիտարանի առաջին տնօրեն Վիկտոր Համբարձումյանի նախաձեռնությամբ: Աստղադիտարանի պաշտոնական բացումը տեղի է ունեցել 1956 թվականին: Այն կառուցված է Արագած լեռան հարավային գեղատեսիլ լանջին:

Նկար 4. Բյուրականի աստղադիտարանը

Աստղադիտարանի գիտական գործունեությունը ուղղված է Տիեզերքում անկայուն երևույթների հետազոտմանը, որի համար նախատեսված են հինգ հիմնական դիտակներ: Աստղադիտարանը որպես ճարտարապետական համալիր՝ բաղկացած հիմնական և օժանդակ կառույցներից, նախագծել է հայ նշանավոր ճարտարապետ Սամվել Սաֆարյանը: Տարածքում գտնվող շինություններից

աշխատում են՝ Վիկտոր Համբարձումյանի տուն- թանգարանը, հյուրանոցը, ճաշարանը, գլխավոր շենքը:

Նկար 5. Աստղադիտարանի գլխավոր մասնաշենքը

1956 թվականին աստղադիտարանում տեղադրվեց Եվրոպայի խոշորագույն դիտակներից մեկը՝ 2.6 մ հայելու տրամագծով՝ դասական աստղադիտակը, որի

համար գործում է անվտանգության կետ, որտեղ աշխատում են 4 հսկիչներ: Աստղադիտարանի տարածքում կան նաև փոքր աստղադիտակներ՝ 50 սմ ռեֆլեկտոր, 40 սմ ռեֆլեկտոր, 20 սմ ռեֆլեկտոր: Ինչպես նաև աշխարհում խոշորներից համարվող հայտնի Շմիդտի համակարգի աստղադիտակը: Այժմ աստղադիտարանում աշխատողների թիվը հասնում է 108-ի, որոնցից 41-ը՝ գիտաշխատող են, մնացածը աշխատում են տնտեսական բաժնում, հասարակական կապերի բաժնում և հաշվապահությունում: Աստղադիտարանի տարածքի համար գործում է 2 անվտանգության կետ, որտեղ աշխատողների թիվը հասնում է 8-ի: [19]Աստղադիտարանը այցելությունների համար աշխատում է ամեն օր: Այցելությունները բաժանվում են մի քանի մասի: Լինում են ցերեկային այցելություններ, որի ընթացքում ցուցադրվում է Վիկտոր Համբարձումյանի անվան տուն- թանգարանը, 2.6 սմ տրամագծով աստղադիտակը և այցելավարը ներկայացնում է աստղադիտարանի պատմությունը: Գիշերային այցելությունների

[19] https://www.aras.am/, Հայկական Աստղագիտական Ընկերություն, 23.03.19, 12:30

ժամանակ այցելավարը ներկայացնում է տիեզերքը՝ փոքր աստղադիտակով, որը նախատեսված է այցելուների համար (0.3 սմ) և ներկայացնում է աստղազարդ երկինքը: Լինում են նաև սեմինարներ, որի ժամանակ ներկայացվում են մասնագիտական նյութեր: Բոլոր այցելությունները անցկացվում են 3 լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն: Հայաստանն աստղագիտական երկիր է: Միջազգային աստղագիտական կենտրոնի որոշմամբ ՀՀ-ն ընտրվեց որպես տարածաշրջանում գլխավոր երկիր՝ լինելով զարգացման մակարդակով ամենաբարձրն ու համապատասխանը: Այցելուները լինելով Բյուրականի աստղադիտարանում կարող են տեսնել հետևյալը՝

- Ինչպիսի պայմաններում է ապրել և աշխատել Վիկտոր Համբարձումյանը
- Տեսնել տարածաշրջանի խոշորագույն 2.6 սմ աստղադիտակը
- Վայելել Բյուրականի բնությունը և աստղադիտարանի հարուստ բուսաբանական այգին
- Կարող են տեսնել նաև հայ- խորհրդային աստղագետ Բենիամին Մարգարյանի սպեկտրային շրջագայությունը, որը ընդգրկվել է Հայաստանի ՅՈՒՆԵՍԿՕ-ի արժեքների ցանկում:

Նկար 6 . Վիկտոր Համբարձումյանի տուն-թանգարանը

- Այցելուները կարող են զբոսանք կատարել գիշերային երկնքով՝

պրոֆեսիոնալ 0.3 սմ փոքր աստղադիտակով:

2018 թվականից մատուցվող ծառայությունների մակարդակը բարձրացնելու շնորհիվ այցելությունների թիվը ավելացավ: Այցելել են ՀՀ-ի 95 դպրոցներից մոտ 7300 դպրոցական, շուրջ 7500 ՀՀ քաղաքացի և մոտ 950 օտարերկրացի: Օտարերկրացիները մեծ մասամբ եղել են ՌԴ-ից և Ֆրանսիայից: Դպրոցականները մեծ մասամբ այցելել են Վիկտոր Համբարձումյանի տուն-թանգարան: ՀՀ քաղաքացիների մեծ մասը օգտվել է գիշերային էքսկուրսիաներից, իսկ արտերկրացիները՝ 2.6 սմ աստղադիտակից և գիշերային այցելություններից: Բյուրականի աստղադիտարան այցելուներ են գալիս տարբեր տուրիստական կազմակերպությունների կողմից՝ <<ONE WAY>>, << Արշավներ ակումբ>>, << Արի տես>>, <<Կանչ արշավական ակումբ>>, <<Hyur Service>>, << World Vision>>, << Geographic Travel>>, << Adventure Bus Travel>> և այլն:

Աստղադիտարանում գործում է ստանդարտ գնացուցակ, որը փոփոխման ենթակա չէ: Հանրակրթական դպրոցների համար գործում են զեղչեր: Տուն-թանգարանը սպասարկուն են անվճար, իսկ մյուս ծառայությունները շատ մատչելի գներով:

Ներկայիս երիտասարդ աստղագետները ձգտում են համագործակցել այլ երկրների աստղագետների հետ և զարգացման նոր ուղիներ փնտրել: Բյուրականի աստղադիտարանը բուն գիտական հետազոտություններին զուգահեռ իրականացնում է նաև գիտության տարածման գործընթաց պարբերական հրապարակումների, աստղադիտարանում արդեն քանի տարի գործող երիտասարդ աստղագետների ամառային դպրոցի, դասախոսությունների և էքսկուրսիաների միջոցով: Աստղադիտարանի շնորհիվ Բյուրական գյուղը հայտնի է ամբողջ աշխարհում: Չնայած Բյուրականը քաղաք էլ չէ, բայց դրա անունը մտնում է աշխարհի 10 խոշորագույն քաղաքների ցանկում, որտեղ առավել հաճախ անցկացվում են միջազգային աստղագիտական գիտաժողովներ: Այդ քաղաքներից են Փարիզը, Պրահան, Պեկինը, Ռիո դե Ժանեյրոն, Հռոմը և ևն:

2013-ին ՀՀ կառավարությունը Բյուրականի աստղադիտարանը ճանաչել է ազգային արժեք, ինչպիսին են նաեւ Մատենադարանն ու Ցեղասպանության թանգարանը:

Աստղադիտարանը տարածաշրջանում կարևորվում է որպես զբոսաշրջային այցելությունների կենտրոն: Աստղադիտարանը զբոսարջիկներին գրավիչ դարձնելու

համար մի շարք միջոցառումներ են ձեռնարկվում: Վերանորոգվել է տուն-թանգարանը, սեմինարների սենյակը, դրվել են ցուցանակներ:

Բյուրականի սերվիսային ձեռնարկություններից աչքի է ընկնում <<Հյուսիսային Աստղ>> հյուրանոցը: Հյուրանոցը գտնվում է Երևանից 34 կմ հեռավորության վրա: Հյուրանոցը ինտելեկտուալ տուրիզմի, սպորտի եւ առողջության կենտրոն է հանդիսանում: Հանգստից, սպորտով ու լեռնագնացությամբ զբաղվելուց բացի, հյուրերն այստեղ նաեւ աստղագիտության հետ ծանոթանալու հնարավորություն ունեն:[20]

Նկար 7. << Հյուսիսային աստղ>> հյուրանոց

Համալիրը տրամադրում է հարմարավետ համարներ՝ ապահովված բոլոր

անհրաժեշտ պայմաններով: Հյուրանոցում երեք տասնյակից ավելի սենյակներ կան: Տարածքում կա բաց լողավազան, սաունա, սեղանի թենիս, ֆիթնես դահլիճ, ֆուտբոլի և վոլեյբոլի դաշտեր: Հյուրանոցի գնացուցակը շատ մատչելի է: Երկու հոգու համար մեկ օրվա արժեքը կազմում է 30 հազար դրամ (մոտ $60)՝ ներառյալ նախաճաշը:

Հյուրանոցի տարածքը հսկայական է, իր մեջ ներառում է մի քանի կառույց: Բաց հրապարակները կանաչապատված են, մեղմորեն հնչում է շատրվանի ջուրը: Բակում

[20] https://style.news.am/arm/news/841/byurakani-hyusisayin-astx, NEWS.am style կայքէջ, 05.04.19, 19:15

ոչ շատ մեծ լողավազանն է՝ ձկներով: Ոչ դեկորատիվ, այլ, այսպես ասած, արտադրական նշանակության: Հյուրանոցում հանգստացողներին առաջարկում են թանկարժեք տեսակի ձկներից ուտեստներ՝ մեր հայրենական իշխան և «հյուսիսային» բեստեր (թառափի ու ստերլետի հիբրիդ):

Հյուրանոցում կա յուրատեսակ հրաձգարան՝ ձևավորած «Վայրի Արևմուտք»-ի ոճով: Պատերին կովբոյական ու հնդկացիական զենքերի նմուշներ են: Լեռնային տուրիզմի սիրահարները կարող են հենց այստեղ վարձել ալպինիստական սարքավորումներ: Ալպինիստ-հյուրերին ուղեկցում է հատուկ ուղեկցորդը:

Հյուրանոցի շենքերից մեկում նախատեսված է հանգստյան տների համար հազվադեպ մանկական սենյակ՝ «հագեցած» բազմազան խաղալիքներով: Հյուրանոցում հատուկ կահավորված է պլանետարիում և գործում է գրադարան: Այստեղ այցելուները կարող են տեղեկություններ ստանալ աստղագիտության, Բյուրականի աստղադիտարանի պատմության և գործունեության մասին: Հյուրանոցի մոտակայքում է գտնվում Բյուրականի աստղադիտարանը, ինչը հնարավորություն է տալիս հյուրերին այցելել աստղադիտարան: Հյուրանոցի տանիքում կառուցվել է գմբեթ, որտեղ տեղադրված են աստղադիտակներ, որոնք հնարավորություն են տալիս ծանոթանալ աստղազարդ երկնքի հետ: Հյուրանոցի ներսում գործում է նաև հանդիսությունների սրահ՝ նախատեսված 150 հոգու համար:

ԳԼՈՒԽ 3. ՍԵՐՎԻՍԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲՅՈՒՐԱԿԱՆՈՒՄ

3.1 Բյուրականում սերվիսային գործունեության զարգացման անհրաժեշտ պայմանները

Ինչպես արդեն նշեցինք Բյուրական գյուղն ունի մեծ պոտենցիալ սերվիսային գործունեության զարգացման համար: Բյուրականը ունենալով տնտեսաաշխարհագրական բարենպաստ դիրք, ռեսուրսներ, բնակլիմայական նպաստավոր պայմաններ կարող է համարվել սերվիսի զարգացման կենտրոն, որի համար անհրաժեշտ են մի շարք պայմաններ: Քանի որ սերվիսը սերտորեն կապված է զբոսաշրջության հետ, ուստի մեկի զարգացումը նպաստում է մյուսի զարգացմանը: Զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ է բարելավել ենթակառուցվածքները, իրականացնել աշխատակիցների վերապատրաստումներ, ստեղծել ինֆորմացիոն տեղեկատվական կենտրոններ, թողարկել բուկլետներ, կազմակերպել մարքեթինգային արշավներ: Այս ամենի նպատակն է բարձրացնել զբոսաշրջիկների հետաքրքրությունը: Զբոսաշրջության ներուժի օգտագործումը կնպաստի գյուղի վերամշակող արդյունաբերության, գյուղատնտեսության և սերվիսի աճին: Բյուրական գյուղում բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հարկավոր է հետևողականորեն բարելավել գյուղի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային, հանգստի և ժամանցի պայմանները, գյուղը դարձնել տարածաշրջանային զբոսաշրջության կենտրոն, մաքուր, բարեկարգ և գրավիչ բնակավայր: Բյուրականում սերվիսային գործունեության զարգացման համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները՝

• Բարեկարգել ճանապարհներն ու փողոցները: Ճանապարհները դիտարկելով որպես սպասարկման և զբոսաշրջային ենթակառուցվածքի հիմնական ու ամենակարևոր մաս հստակ կարող ենք նշել որ, ճանապարհները ոչ բարվոք վիճակում են, ինչը բացասաբար է անդրադառնում գյուղում առկա զբոսաշրջային ռեսուրսների շահագործման համար: Զբոսաշրջության կազմակերպման համար անհրաժեշտ է բարվոք տրանսպորտային ենթակառուցվածքի առկայությունը, ինչը հնարավորություն կտա զբոսաշրջիկներին տեղից տեղ տեղափոխվել:[21]

• Բարելավել փողոցային լուսավորության, ջրամատակարարման,

[21] http://aragatsotn.mtad.am/ Արագածոտնի մարզպետարանի պաշտոնական կայքէջ, 10.04.19, 20:10

աղբահանության համակարգերի գործունեությունը, ապահովել համայնքը շուրջօրյա խմելու ջրով:

• Նպաստել գյուղի տարածքում նոր աշխատատեղերի ստեղծմանը՝ զարկ տալով մանր և միջին բիզնեսի, գյուղատնտեսության զարգացմանը:

• Կազմակերպել գյուղի բնակչության մարզամշակութային կյանքը, ազատ ժամանցն ու հանգիստը, նպաստել տուրիզմի զարգացմանը:

• Բարելավել գյուղապետարանի աշխատակազմի կառավարման արդյունավետությունը:

• Ակտիվորեն համագործակցել հասարակական կազմակերպությունների, ակտիվ գյուղացիների հետ՝ նպաստելով գյուղում մասնակցային կառավարման ձևավորմանը:

• Կատարել նպատակային հողահատկացումներ հասարակական սպասարկման շենք-շինությունների կառուցման նպատակով՝ առևտրի օբյեկտներ, ռեստորաններ, սրճարաններ, սննդի արագ սպասարկման կետեր, գեղեցկության սրահներ, ինտերնետ ակումբ, լվացքատուն, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման կետեր և այլն:

• Գյուղի անտառամերձ ռեկրեացիոն գոտում հատկացնել հողատարածքներ՝ ժամանակակից հյուրանոցային համալիրների, հանգստյան և զբոսաշրջիկների համար նախատեսված օբյեկտների կառուցման նպատակով:

• Գյուղի պատմությունը հակիրճ ներկայացնող երկլեզու քարե ցուցանակի տեղադրում:

• Հնարավոր միջոցներ գտնել և գյուղում տեղադրել արձաններ, ցուցանակներ և գյուղի խորհրդանիշեր:

• Առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտների սեփականատերերի հետ համատեղ աշխատանքի արդյունքում հասնել այն բանին, որ համայնքում գնալով ավելանան առևտրի և սպասարկան ժամանակակից պահանջներին համապատասխան խանութներն ու սպասարկման օբյեկտները, լինեն ժամանակաից հանրախանութներ, զբոսաշրջիկներին հետաքրքրող հայկական հուշանվերների, առողջ բնամթերքների խանութներ, որոնք կխոսեն նաև գյուղի և նրա կենսամակարդակի մասին:

• Բյուրականն իրական հանգստավայր դարձնելու նպատակով հարկավոր է ավելացնել կանաչապատ գոտիները, զբոսայգիներն ու պուրակները, կանաչապատել հասարակական նշանակության սպասարկան և ժամանցի օբյեկտների տարածքները՝ հասարակական կանաչապատ տարածքների պահանջներին համապատասխան:

• Համագործակցելով գյուղի կրթական և հասարակական կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների հետ՝ պարբերաբար (տարեկան գոնե 2 անգամ) կազմակերպել <<Մաքուր Բյուրական>> և <<Կանաչ Բյուրական>> ակցիաներ, որի ընթացքում իրականացնել շաբաթօրյակներ և ծառատունկեր՝ ներառելով գյուղի կենտրոնական մասն ու ծայրամասերը, ինչպես նաև, անտառային գոտին, պատմամշակութային արժեք ունեցող հուշարձանների ու մատուռների տարածքները:

• Նախատեսել, որպեսզի գյուղի հյուսիսային մասում տեղակայված հանգստյան գոտիների միջև ձևավորվի միասնական երթուղի, որն անցնելով անտառի եզրագծով, կստեղծի միասնական կապ գրեթե բոլոր հանգստյան օբյեկտների միջև, ինչպես նաև անցնելով գյուղի ողջ տարածքի նկատմամբ փոքր-ինչ բարձր նիշերով, կծառայի որպես զբոսաշրջային երթուղի պարկվեյ՝ բացելով բարձրարժեք դիտակետեր դեպի գյուղի ողջ համայնապատկերի ընկալումը:

Յուրաքանչյուր, և հատկապես սերվիսի բնագավառում տեղեկատվական տեխնոլոգիաների դերը գնալով մեծանում է՝ ապահովելով մարդկանց տեղեկացվածությունը: Այս գործոնը նույնպես կարևոր պայման է հանդիսանում սերվիսային գործունեության զարգացման համար, որի նպատակով անհրաժեշտ է՝

• Գյուղապետարանի առաջին հարկում ստեղծել տեղեկատվական կենտրոն, որի աշխատակիցը պետք է օգնի և տեղեկատվություն տա գյուղ այցելած հյուրերին, զբոսաշրջիկներին և այլ մարդկանց գյուղի, նրա տեսարժան վայրերի, հիմնարկ ձեռնարկությունների, սպասարկման օբյեկտների և այլնի մասին, ապահովի գյուղի քարտեզով և տեղեկատվական այլ նյութերով՝ գրքույկներ, տեսասկավառակ:

• Աջակցել գյուղի ակտիվ երիտասարդներին և ուսանողությանը՝ ստեղծելու երիտասարդական կենտրոն, որը կզբաղվի երիտասարդների մշակութային կյանքի, հանգստի և բովանդակալից ժամանցի կազմակերպման, հասարակական ակտիվության և մասնակցային կառավարման, իրավահոգեբանական աջակցման, տարբեր ծրագրերի ու նախաձեռնությունների իրականցման և երիտասարդության

համախմբման հարցերով և այլն:

• Շարունակելով համագործակցությունը մարզային և հանրապետական լրատվամիջոցների հետ՝ լուսաբանել գյուղի խնդիները, կատարված աշխատանքերն ու միջոցառումները, գյուղի ղեկավարի և նրա աշխատակազմի գործունեությունը:

• Հրատարակել տեղեկատվական գրքույկներ և նկարահանել Բյուրականի մասին պատմող փաստավավերագրական ֆիլմ, որտեղ կներկայացվի գյուղն իր բնական ռեսուրսներով, բարենպաստ պայմաններով, տեսարժան վայրերով, պատմամշակութային արժեքներով, իր հնամենի պատմությամբ, ավանդույթներով, բարի ու հյուրընկալ մարդկանցով, զարգացման նոր միտումներով ու հեռանկարով: Սա հնարավորություն կտա գյուղը և նրա դրական կողմերը տեսանելի և գրավիչ դարձնել հայ և արտասահմանցի զբոսաշրջիկների, գործարարների ու ներդնողների համար, շարժել նրանց հետաքրքրությունը Բյուրականի նկատմամբ, շահագրգռել, որպեսզի իրենց հանգիստը կազմակերպեն գեղատեսիլ բնության գրկում, ներդրումներ կատարեն այստեղ՝ նպաստելով գյուղի զարգացմանը:

3.2 Բյուրականում սերվիսի զարգացմանն ուղղված միջոցառումները

Բյուրական գյուղում սերվիսի զարգացմանն ուղղված բազմաթիվ միջոցառումներ են իրականացվում: Հատկապես վերջին մի քանի տարիների ընթացքում մեծացել է հետաքրքրությունը Բյուրականի սերվիսային և զբոսաշրջային ներուժի օգտագործման նկատմամբ: Հատկապես կարևոր են զբոսաշրջությանն ուղղված միջոցառումները, քանի որ զբոսաշրջությունը որպես սերվիսի ուղություն մեծ հեռանկարներ ունի Բյուրականում աշխատատեղեր ստեղծելու, կայուն եկամուտ ապահովելու և գյուղը ավելի հայտնի դարձնելու գործում: Բյուրականում սերվիսի ոլորտի և զբոսաշրջության զարգացմանը հնարավոր է նպաստել նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ և ռազմավարական ճիշտ քայլերի իրականացման միջոցով: Բյուրական գյուղն ունի սերվիսի և զբոսաշրջության զարգացման մեծ հեռանկարներ, սակայն դեռ դրանք լիովին բացահայտված չեն: Սերվիսի զարգացմանն ուղղված միջոցառումների թվում կարող ենք նշել այն փաստը, որ գյուղում է գտնվում աշխարհին հայտնի Բյուրականի աստղադիտարանը, որի շնորհիվ գյուղը դասվում է աշխարհի 10 խոշորագույն քաղաքների ցանկում: Ներկայումս մի շարք զբոսաշրջային կազմակերպություններ համագործակցում են Բյուրականի աստղադիտարանի հետ՝ կազմակերպելով զբոսաշրջային հոսքերի

այցելություն:

Սերվիսի ոլորտի և նրա մաս հանդիսացող զբոսաշրջության զարգացման ու առաջընթացի համար լայն աշխատանքներ և միջոցառումներ են իրականացվում Բյուրական գյուղում: Այդ միջոցառումները կարելի է ներկայացնել առանձին կետերով՝

- Վիկտոր Համբարձումյանի տուն- թանգարանի բացումը գյուղում, ինչը նպաստեց ինչպես տեղաբնիկների, այնպես էլ զբոսաշրջիկների մեծաքանակ այցելությունը թանգարան:

- «Երևանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոնի կողմից 2015 թվականի ապրիլի 3-ին բացվեց Բյուրականի արվեստի ակադեմիան: Ակադեմիայում անցկացվում են հայ մտավորականների հանդիպումներ և քննարկումներ՝ արդի կարևորության թեմաներով, անցկացվում են վարպետության դասընթացներ, համերգներ, շնորհանդեսներ և ցուցադրումներ՝ բոլոր արվեստագետների համար: Կառույցն իր տեսակով միակն է նաև ողջ տարածաշրջանում և աշխարհի մի քանի հանրահայտ փառատոնների ակադեմիաներից է, որոնց միավորում է երիտասարդ սերնդի երաժիշտ-կատարողներին բարձրակարգ երաժշտական մասնագիտական հմտությունների փոխանցման և միջազգային հռչակ ունեցող երաժիշտների հետ համատեղ արվեստի կերտման գաղափարը՝ հատուկ միջավայրում:

Սերվիսի զարգացմանն ուղղված միջոցառումներից մեկն էլ չոր մրգերի պատրաստման արտադրամասի ստեղծումն էր, 2014 թվականին, ինչը նպաստեց մարդկանց բարեկեցությանն ու եկամուտների աճին:[22]

- <<Հյուսիսային աստղ>> հյուրանոցի բացումը: Հյուրանոցը ինտելեկտուալ տուրիզմի, սպորտի և առողջության կենտրոն է հանդիսանում: Հանգստից, սպորտով ու լեռնագնացությամբ զբաղվելուց բացի, հյուրերն այստեղ նաև աստղագիտության հետ ծանոթանալու հնարավորություն ունեն:

- <<Օջախ >> ռեստորանային համալիրի բացումը գյուղում: Սա նույնպես խոսում է այն մասին, որ սերվիսային գործունեությունը գյուղում գնալով ծաղկում է

[22] http://byurakan.com.am/Pages/Home/Default.aspx Արագածոտնի մարզի Բյուրական գյուղի պաշտոնական կայքէջ, 15.04.19, 14:05

ապրում՝ ներկայացնելով մեծ հետաքրքրություն զբոսաշրջիկների համար:

- Խաղահրապարակների և բացօթյա մարզահրապարակի կառուցում:

Կարևոր աշխատանքներ են տարվում նաև զբոսաշրջության ոլորտում, քանի որ, ինչպես արդեն նշվել է սերվիսի ոլորտում և տնտեսության մեջ զբոսաշրջությունը հայտարարված է գերակա ուղղություն: Զբոսաշրջության ոլորտի զարգացմանն ուղղված միջոցառումները ևս կարելի է թվարկել կետերով՝

- Գյուղում միջոցառումներ են կատարվում նաև ակտիվ զբոսաշրջության համար: Բյուրականը հարմար է ինչպես ամառային, այնպես էլ ձմեռային զբոսաշրջության զարգացման համար: Այդ նպատակով մեծ ուշադրություն է դարձվում հյուրանոցների, հանգստյան տների բացմանը:

- Բյուրականում զբոսաշրջության զարգացմանը կնպաստի հետևյալ միջոցառումը, որը իրականացվելու է մարզի զբոսաշրջային ձեռնարկությունների կողմից ՝ մշակել և ապահովել երթուղի-ճանապարհ դեպի Արագած լեռան հարավային մաս, Ամբերդ ամրոց և Քարի լիճ:

Բյուրական գյուղում սերվիսի զարգացմանն ուղղված միջոցառումները շարունակական բնույթ են կրում և նորովի զարգացման միտումներ են հետապնդում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով նշենք, որ աշխատանքում կատարվեցին մի շարք վերլուծություններ Բյուրականի տնտեսաշխարհագրական դիրքի, բնական և սոցիալ-տնտեսական նախադրյալների, Բյուրականում սերվիսային գործունեության հիմնական տեսակների, Բյուրականում սերվիսային գործունեության զարգացման համար անհրաժեշտ պայմանների ու դրանց լուծմանը ուղղված միջոցառումների վերաբերյալ:

Կատարված վերլուծությունների և ուսումնասիրությունների վրա հիմնվելով՝ կարելի է ասել, որ առաջ քաշված վարկածը << Արդյոք Բյուրականում սերվիսային գործունեության առկա պայմանները կնպաստեն սերվիսի՝ գյուղի տնտեսության առաջատար ճյուղ դառնալուն>> հիմնահարցը հաստատվում է:

Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ մեր երկրում մեծ կարևորություն ունի տնտեսության երրորդային ճյուղը կամ սերվիսի ոլորտը: Հայաստանում՝ հատկապես վերջին տարիներին տնտեսության մեջ գնալով մեծանում է սերվիսի և սերվիսային գործունեության դերը: Սերվիսի ոլորտը մեծ նշանակություն ունի ոչ միայն մայրաքաղաք Երևանում, այլ նաև ՀՀ բոլոր մարզերում և գյուղական բնակավայրերում:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ.

- Բյուրականն ունի ռեկրեացիոն բարձր ներուժ՝ պայմանավորված ռելիեֆի բազմազանությամբ
- Գյուղն ունի մեծ պոտենցիալ՝ զբոսաշրջային կենտրոն դառնալու համար
- Գյուղը տիրապետելով համապատասխան ռեսուրսների՝ հնարավորություն ունի ձևավորելու կայուն և առաջնակարգ սերվիսային միջավայր:
- Գյուղն ունի անհրաժեշտ պայմանները՝ սերվիսի կազմակերպման համար, սակայն դրանք կյանքի կկոչվեն համապատասխան միջոցառումների իրականացման դեպքում:
- Բյուրական գյուղում սերվիսի զարգացմանը նպաստում են գյուղի բնական և սոցիալ-տնտեսական նախադրյալները: Գյուղի տնտեսաաշխարհագրական դիրքը, բնակլիմայական առանձնահատկությունները, մարդկային ռեսուրսները, պատմամշակութային կոթողները ևն, կարող են լավագույնս օգտագործվել սերվիսի զարգացման համար:

- Բյուրական գյուղում սերվիսի ոլորտի և զբոսաշրջության կազմակերպման համար կա ռեուրսների մեծ բազա՝ բնական, ռեկրեացիոն, ենթակառուցվածքային, պատմամշակութային, մարդկային և ն:

- Ժամանակակից պայմաններում ծառայությունների ոլորտի և զբոսաշրջության հանդեպ անընդհատ աճող պահանջարկը ստիպում է ցանկացած տնտեսության, ուշադրություն դարձնել սերվիսի ոլորտի թերություններին: Դրանցից զերծ չէ նաև Բյուրականը, որը պարտավոր է հետազոտություններ, վերլուծություններ և համապատասխան միջոցառումներ իրականացնելով ապահովել սերվիսի կայուն զարգացում գյուղի ամբողջ տարածքում:

- Սերվիսի ոլորտը և սերվիսային գործունեությունը նոր որակ և էֆեկտիվություն են տալիս ցանկացած տնտեսության:

- Սերվիսի ոլորտը կարևոր է ցանկացած երկրի, շրջանի և գյուղի տնտեսության կայուն աճի համար: Հատկապես ժամանակակից պայմաններում սերվիսի դերը ավելի է մեծանում, կապված մարդկային պահանջմունքների բազմազանեցման և ծառայությունների դերի մեծացման հետ:

- Գյուղը ունի այնպիսի բնակլիմայական պայմաններ, ռեսուրսներ և աշխարհագրական դիրք, որը հանդիսանում է կարևոր նախապայման մի շարք սերվիսային ձեռնարկությունների ստեղծման և զարգացման համար:

- Սերվիսը Բյուրականում կդառնա տնտեսության զարգացման հիմնական գործոն, հետևաբար զարգացած տնտեսություն ունենալու նախադրյալ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով և վերլուծելով սերվիսի զարգացման հնարավորությունները Բյուրական գյուղում, հարկ է նշել, որ Բյուրականը, ինչպես վերը նշվել է արդեն, ունի սերվիսի զարգացման համար մեծ նախադրյալներ: Չնայած կատարված և կատարվող միջոցառումներին այդուհանդերձ կան այնպիսի թերություններ, որոնք փոխլրացվելու են միայն նվիրյալ աշխատանքի, գյուղի հանդեպ պարտավորվածության և սրտացավ վերաբերմունքի միջոցով:

Շատ կարևոր է, որ գյուղի սերվիսային միջավայրի բարելավմամբ, գյուղում սերվիսի զարգացմամբ ու առաջխաղացմամբ հետաքրքրված լինի գյուղի յուրաքանչյուր բնակիչ: Գյուղի իշխանությունները ևս ձեռնամուխ լինեն իրենց իսկ կողմից մարզում տնտեսության առաջնային ճյուղ հայտարարած սերվիսի ոլորտի և զբոսաշրջության զարգացմանն ու առաջընթացին:

Ամփոփելով Բյուրական գյուղի սերվիսի զարգացմանն ուղղված վերլուծությունները, կատարված աշխատանքները և կատարվելիք միջոցառումները, կարողենք առանձին կետերով նշել այն առաջարկությունները, որոնք կնպաստեն Բյուրական գյուղում սերվիսի զարգացմանն ուտնտեսության կայուն առաջընթացին:

- ✓ Բյուրականում ստեղծել սերվիսի ոլորտի և նրա ճյուղերի հետազոտությունները, կարգավորումը, զարգացումն ու առաջընթացը համակարգողև համախմբողկառույց:
- ✓ Ստեղծել սերվիսի և զբոսաշրջային ոլորտում նորարարական մոտեցումների ստեղծմամբ և առաջխաղացմամբ զբաղվողկառույց:
- ✓ Ստեղծել և զբոսաշրջիկներին առաջարկել տուրփաթեթ, որը իր զբոսաշրջային երթուղին կսկսի Բյուրական գյուղից և կընդգրկի Արագած լեռը, Քարե լիճը և Ամբերդ ամրոցը: